



**«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«13» նոյեմբերի 2018թ. թիվ 46 որոշմամբ՝
Փոփոխությունները և լրացումները՝
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«22» հունվարի 2021թ. թիվ 02 որոշմամբ

**ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ	4
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ.....	5
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ	6
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	6
7. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)	8
8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	9
9. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈՂԱՑԻԱ).....	9
10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ	11

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Կանխավճարի կամավոր ապահովագրության սույն կանոնները, (այսուհետև՝ Կանոններ), սահմանված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

1.2 Կանխավճարի կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ոչ կյանքի Ապահովագրության տեսակի «Տինանսական վնասների ապահովագրություն» դասի մեջ:

1.3 Կանոնները հանդիսանում են Կանխավճարի կամավոր ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (այսուհետև՝ Ապահովագրության պայմանագիր) անբաժանելի մասը: Ապահովագրության պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերին:

1.4 Կանոնների համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ն (այսուհետև՝ Ապահովագրող), գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, կնքում է Կանխավճարի կամավոր Ապահովագրության պայմանագրեր իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հետ (այսուհետև՝ Ապահովադիր): Կանոնների համաձայն Ապահովագրության պայմանագրերը կնքվում են հիփոթեքային վարկերի վերադարձելիության ապահովագրության նպատակով:

Կանոնների համաձայն տրամադրվող հիփոթեքային վարկերը կարող են լինել ինչպես դրամային, այնպես էլ արտարժույթային:

Կանոնները գործում են գրավով ապահովված հիփոթեքային վարկային պայմանագրերի գծով չապահովված Կանխավճարի մասի նկատմամբ:

1.1 Կանոններում գործածվող հիմնական հասկացություններն են՝

✓ Ապահովագրող՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ,

✓ Ապահովադիր՝ Ապահովագրողի հետ Ապահովագրության պայմանագիր կնքող բանկ կամ վարկային կազմակերպություն,

✓ Շահառու՝ Ապահովագրության պայմանագրում նշված բանկ կամ վարկային կազմակերպություն, որը համաձայն իրավական ակտերի կամ պայմանագրերի ունի ապահովագրական հատուցում ստանալու առաջնային իրավունք,

✓ Հիփոթեքային վարկ՝ Վարկային պայմանագրով բանկի կամ վարկային կազմակերպության կողմից որոշակի ժամկետով վերադարձելիության և վարկային տոկոսի վճարման պայմանով տրամադրված դրամական միջոցներ,

✓ Կանխավճար՝ հիփոթեքային վարկ տրամադրելիս ձեռք բերվող բնակարանի արժեքի որոշակի տոկոսի չափով կանխավճար, որը պահանջում է բանկը կամ վարկային կազմակերպությունը՝ վարկը չմարվելու հետևանքով ֆինանսական կորուստներ կրելու իր հետագա ռիսկերը նվազեցնելու նպատակով:

✓ Վարկի առավելագույն ժամանակահատված՝ Ապահովագրության պայմանագրում վարկի վերադարձման համար սահմանված առավելագույն ժամանակահատվածը,

✓ Ապահովագրական պատահար՝ ցանկացած պատահար, որը հայտնի է դառնում Ապահովագրողին և որը համարվում է Կանոնների համաձայն ապահովագրական և կարող է հանգեցնել Կանխավճարի մարման ժամկետի կետանցման,

✓ Վարկառու՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ով Վարկային պայմանագրի հիման վրա ստացել է դրամական միջոցներ,

✓ Վարկային պայմանագիր՝ Վարկատուի և Վարկառուի կողմից ստորագրված գրավոր պայմանագիր, որը հավաստում է բանկի կամ վարկային կազմակերպության կողմից Վարկառուին

տրամադրված դրամական միջոցների մասին՝ ներառելով իր մեջ դրամական միջոցների չափը, տոկոսագումարը, արժույթը և այլ վավեր պայմաններ,

✓ Վճարունակություն՝ Վարկառուի ունակությունը՝ ժամանակին և ամբողջ ծավալով իրականացնելու Վարկային պայմանագրով սահմանված վճարումները,

✓ Չհատուցվող գումար (ֆրանշիզա)՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը,

✓ Ապահովագրական հայտ՝ Կանոններում նշված պատճառներով վարկի մարումը չկատարելու կամ մասնակի կատարելու վերաբերյալ Ապահովադրի դիմումը,

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Կանոնների համաձայն Ապահովագրողի կողմից չի հատուցվում այն վնասը կամ կորուստը, որը՝

- տեղի է ունեցել մինչև ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը կամ ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո:

- հետևանք է պատերազմի, կամ պատերազմական գործողությունների /անկախ այն բանից, պատերազմը հայտարարված է, թե ոչ, քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, բողոքի, զանգվածային իրարանցման, ռազմական դրության և նմանատիպ գործողությունների ուղղակի կամ անուղղակի ազդեցության, առաջացել է Վարկառուի ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի արդյունքում,

- արդյունք է Վարկառուի կողմից ինքն իրեն մարմնական վնասվածք հասցնելու,

- Շահառուի ղեկավարների կամ բաժնետերերի (մասնակիցների) դիտավորյալ գործողությունների արդյունքում վարկի չմարման կամ մասնակի մարման պատճառ է հանդիսացել,

- առաջացել է առանց Ապահովագրողի հետ համաձայնեցման վարկային պայմանագրի պայմանների փոփոխմամբ պայմանավորված վարկի չմարման արդյունքում,

- առաջացել է Ապահովադրի կողմից վարկի նպատակային օգտագործման նկատմամբ սահմանված և համաձայնեցված ընթացակարգերին ոչ համապատասխան հսկողության իրականացման արդյունքում,

- առաջացել է Ապահովադրի կողմից տրամադրված վարկը ոչ նպատակային օգտագործելու արդյունքում,

2.2 Ապահովագրության ենթակա չեն Ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորություն ունեցող վարկառուների վարկերը:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ապահովագրության պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է սահմանված որոշակի գումարի (ապահովագրավճարի) դիմաց Կանոններով սահմանված և Ապահովագրության պայմանագրում նշված որոշակի ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրին վճարել Ապահովագրության պայմանագրով սահմանված որոշակի գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում ապահովագրական հատուցում:

3.2 Ապահովագրության պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովադրի կողմից գրավոր կամ բանավոր դիմումը: Ապահովագրողը կարող է պահանջել նաև փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են Ապահովագրության պայմանագրի կնքման և ռիսկի

գնահատման համար՝ ներառյալ Վարկառուի վճարունակությունը և սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր:

Ապահովագրության պայմանագրի կնքման համար Ապահովագրողը կարող է պահանջել նաև Վարկային պայմանագրի պատճեն:

3.3 Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Ապահովագրության պայմանագրում: Ապահովագրության գործողության ժամկետի սկիզբը չի կարող լինել Ապահովագրության պայմանագրի կնքման ժամկետից շուտ:

3.4 Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրանով նախատեսված ապահովագրավճարը կամ դրա մի մասն Ապահովագրողին վճարելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության Պայմանագրով:

3.5 Կանոնների համաձայն տրամադրվող ապահովագրությունը գործում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում:

3.6 Ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարը կամ դրա մի մասը Ապահովագրության պայմանագրով նախատեսված ժամկետում Ապահովագրողի կողմից չվճարելու դեպքում չվճարված ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետը լրանալու օրվա ժամը 17.00-ից մինչև չվճարված ապահովագրավճարը վճարելու օրվա ժամը 23.59 տեղի ունեցած ապահովագրական դեպքերով Ապահովագրողը հատուցում չի վճարում:

3.7 Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է՝

ա) Ապահովագրության պայմանագրում նշված ժամկետի լրանալուց հետո.

բ) Ապահովագրողի կողմից Ապահովագրության Կանոնների և դրանց հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո,

գ) կողմերի համաձայնությամբ.

դ) մեկ կամ մի քանի վնասների հատուցման արդյունքում Պատասխանատվության Համախառն սահմանաչափի սպառման հետևանքով,

ե) եթե Վարկային պայմանագրի մեջ կատարվել են փոփոխություններ, որոնց մասին Ապահովագրողին չի տեղեկացվել,

զ) Վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունները Վարկառուի կողմից ամբողջությամբ կատարվելուց հետո:

է) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

3.8 Ապահովագրողը ցանկացած ժամանակ իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվելու Ապահովագրության պայմանագրից, այդ մասին ենթադրվող դադարեցման մասին առնվազն 15 օր առաջ տեղեկացնելով Ապահովագրողին: Ապահովագրողի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովագրողին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրավճարի 80%-ը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովագրողին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես

հիմք ընդունվում են Ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 100 %-ը:

3.9 Ապահովագրողն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Ապահովագրության պայմանագիրը՝ այդ մասին ենթադրվող դադարեցման մասին առնվազն 15 օր առաջ տեղեկացնելով Ապահովադրին: Ապահովագրողի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 100%-ը: Եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Ապահովագրության Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 80 %-ը:

3.10 Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Ապահովագրության պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար (բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է և Ապահովադիրը (Շահառուն) համաձայնվել է Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ եզրակացության հետ կամ Ապահովադիրը գրավոր հրաժարվել է ապահովագրական հոտուցում ստանալուց) կամ ստացել է ապահովագրական հատուցում:

3.11 Որևէ Ապահովադրի նկատմամբ Ապահովագրության պայմանագրի դադարեցմամբ դադարում է նաև տվյալ Ապահովագրության պայմանագրի գործողության դադարումից հետո ի հայտ եկած Ապահովադրի կողմից կրած կորստի հանդեպ Ապահովագրողի պատասխանատվությունը:

3.12 Եթե Ապահովադիրը որևէ պահանջ ներկայացնի, իրազեկ լինելով, որ այն կեղծ կամ ապօրինի է, ապա Ապահովագրության պայմանագիրը կդադարի գործել և ներկայացված պահանջները կմերժվեն:

4. ՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԶԵՎԸ

4.1 Ապահովագրական գումար է համարվում Ապահովագրության պայմանագրով սահմանված այն դրամական գումարը, որի սահմաններում Ապահովագրողը, ապահովագրական պատահար տեղի ունենալիս պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում:

4.2 Ապահովագրության պայմանագրով կարող են նախատեսվել ապահովագրական պատահարով հատուցման ենթակա առավելագույն չափեր՝ ապահովագրական գումարի ենթասահմանաչափեր:

4.3 Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ ապահովագրական գումարի ենթասահմանաչափերը որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4.4 Ապահովագրավճար է համարվում ապահովագրության համար նախատեսվող այն գումարը, որն Ապահովադիրն Ապահովագրության պայմանագրի համաձայն պարտավոր է վճարել Ապահովագրողին և որը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, ապահովագրության ժամկետներից, ապահովագրական ռիսկերից, Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից և դրանց ծավալից,

չհատուցվող գումարի մեծությունից և Ապահովագրողի պատասխանատվության վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

4.5 Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ Ապահովագրության ժամկետի համար կամ մաս-մաս: Վճարման կարգը սահմանվում է Ապահովագրության պայմանագրով:

4.6 Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի դրամարկղ կամ ներկայացուցչին, իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի համապատասխան հաշվարկային հաշվին:

4.7 Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Ապահովագրության պայմանագրով:

4.8 Ապահովագրավճարի տարածամկետ վճարում նախատեսող Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողն իրավունքի ունի հատուցման չափը պակասեցնել ապահովագրավճարի չվճարված մասի չափով:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊՍՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

5.1 Պայմանագրով ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի կողմից Վարկառուի և Ապահովադրի միջև կնքված վարկային պայմանագրի համաձայն Վարկառուին տրամադրված Վարկի գծով վերջինիս կողմից Ապահովադրի հանդեպ վարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով որպես ապահովման միջոց գրավադրված Անշարժ գույքի՝ երրորդ անձի իրացման դեպքում՝ Չվճարված կանխավճարի չափով ապահովագրական գումարի ամբողջական կամ մասնակի կորուստը Ապահովադրի կողմից, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին վճարել ապահովագրական հատուցում Վկայագրով սահմանված չափով: Այսինքն՝ ապահովագրական հատուցում տրամադրվում է այն դեպքում, երբ գրավադրված գույքը Ապահովադրին արդեն իսկ բռնագանձել է, և իրացման արդյունքում ստացված գումարը չի բավարարում վարկի մայր գումարի մնացորդը մարելու համար: Ընդ որում՝ ապահովագրական հատուցումը տրամադրվում է վարկի մայր գումարի մնացորդի և իրացման գնի դրական տարբերության ամբողջ չափով՝ Չվճարված կանխավճարի չափով ապահովագրական գումարի սահմաններում: Մույն պայմանագրի շրջանակներում որպես բացառություն են դիտարկվում և ապահովագրական պատահար չեն հանդիսանում բոլոր այն դեպքերը, երբ գրավադրված գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում օտարվել է այդ գույքի նախկին սեփականատիրոջը (որի գույքի վրա տարածվել է բռնագանձումը):

5.2 Եթե Ապահովադրի կրած վնասը ենթակա է հատուցման մի քանի դրույթներով, ապա այդ դեպքում հատուցման առավելագույն չափը չպետք է գերազանցի ապահովագրական պատահարի գծով սահմանված պատասխանատվության առավելագույն չափերը:

5.3 Ապահովագրական հատուցումը վճարելիս դրա չափը նվազեցվում է ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով, եթե այդպիսին նախատեսված է Ապահովագրության պայմանագրով:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6.1 Ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագրի հիման վրա Ապահովադիրին կամ Շահառուին վճարման ենթակա դրամական արտահայտությամբ գումարն է:

6.2 Եթե Ապահովադիրը տվյալ Վարկառուի նկատմամբ ունի հանդիպական պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է ժամկետանց վարկի և հանդիպական պարտավորության հաշվարկված դրական տարբերության հիման վրա:

6.3 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրության պայմանագրով և/կամ Կանոններով սահմանված կարգով Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական հատուցումը ստանալու վերաբերյալ հայտ, ինչպես նաև ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր:

6.4 Յուրաքանչյուր հայտ Ապահովագրողը ստուգում է Ապահովադիրի կողմից հաստատված և Ապահովագրողի հետ մշակված համաձայնագրով սահմանված ընթացակարգին համապատասխանության տեսանկյունից՝ պահանջելով համապատասխան փաստաթղթեր Ապահովադիրից:

6.5 Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին Կանոններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում): Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին որոշումը պատշաճ կերպով պարտավոր է հանձնել Ապահովադիրին:

Պատշաճ հանձնում է համարվում Ապահովադիրին կամ նրա լիազոր ներկայացուցչին անձամբ հանձնելը կամ Ապահովադիրի հասցեով փոստային առաքումը:

Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել: Հատուցման մերժման որոշում կայացնելիս Ապահովագրողը պարտավոր է որոշումը կայացնելուց հետո 5 օրյա ժամկետում տեղեկացնել է Ապահովադիրին (Շահառուին)՝ նրա մշտական գործունեության հասցեով:

6.6 Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

6.7 Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

ա) Ապահովադիրն այն պահից, երբ իրեն հայտնի է դարձել ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը, չի հայտնել Ապահովագրողին Կանոններով և Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

բ) Ապահովադիրը, կանխամտածված կերպով չի ձեռնարկել հնարավոր կորուստները փոքրացնելու համար անհրաժեշտ ողջամիտ և մատչելի միջոցներ:

6.8 Այն պատահարի տեղի ունենալու դեպքում, որի հետևանքները հիմք են հանդիսանում կամ կարող են հիմք հանդիսանալ ապահովագրական պատահարի առաջացման և Կանոններից ելնելով ապահովագրական հատուցման վճարման համար, Ապահովադիրը կամ նրա ներկայացուցիչը պարտավոր են ձեռնարկել բոլոր հնարավոր ողջամիտ միջոցառումները պատահարի (ապահովագրական պատահարի) հետևանքները կանխարգելելու կլամ նվազեցնելու համար՝ հասցված վնասի գումարը փոքրացնելու նպատակով:

6.9 Եթե վնասների կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված վերը նշված միջոցառումները չեն ձեռնարկվել Ապահովադրի մեղքով, և վնասի մեծությունն աճել է, Ապահովագրողն իրավունք ունի նվազեցնել Ապահովադրին վճարման ենթակա հատուցման գումարը հիմանական վնասի գծով:

7. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՉԻԶԱ)

7.1 Ապահովագրության պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար (ֆրանչիզա):

7.2 Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

7.3 Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

7.4 Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Ապահովադրին իրավունք ունի՝

ա) Ապահովագրողից պահանջել նրա պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հաստատող փաստաթղթերը,

բ) ծանոթանալ Ապահովագրության պայմաններին,

գ) Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական գործակալների և բրոքերների միջոցով,

դ) ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո ստանալ ապահովագրական հատուցում,

ե) Ապահովագրության պայմանագրի կորստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը, որից հետո կորցրած այլևս կիրառելի չէ: Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում, Ապահովագրության պայմանագրի կրկնօրինակի կորստի դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից գանձել պայմանագրի պատրաստման համար կատարված ծախսին համարժեք գումար:

8.2 Ապահովադրը պարտավոր է՝

ա) Ապահովագրության պայմանագրում նշված ժամկետներում մուծել ապահովագրավճարները,

բ) Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար նշանակություն ունեցող՝ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,

գ) Ապահովագրության պայմանագրով և Կանոններով սահմանված ժամկետում Ապահովագրողին հայտնել ապահովագրական պատահարի առաջացման մասին, ինչպես նաև ներկայացնել ապահովագրական պատահարի պատճառների և հանգամանքների վերաբերյալ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,

դ) ապահովագրական պատահարների առաջացման դեպքում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումներ՝ վնասները կանխելու կամ նվազեցնելու նպատակով,

ե) Ապահովագրողի պահանջով տրամադրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ ներառյալ Վարկառուների քանակի, տրամադրված գումարների և հաշվարկված տոկոսների վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես նաև լրացուցիչ այլ տեղակատվություն:

զ) Կանոնների հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով հատուցում ստանալու համար վնասի հետ առնչվող բոլոր հարցերում ամբողջությամբ համագործակցել Ապահովագրողի և նրա ներկայացուցիչների հետ:

է) հաղորդել Ապահովագրողին ապահովագրական պատահարի հետ կապված իրավասու մարմինների գործողությունների մասին (հետաքննություն, դատական կանչ և այլն),

ը) առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության չտալ խոստումներ և չանել առաջարկություններ կորստի կամ վնասի կամավոր հատուցման վերաբերյալ,

8.3 Ապահովագրողը հրաժարվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց, եթե Ապահովագրողին հայտնի չեն դառնում պատահարի հետ կապված իրեն անհրաժեշտ հանգամանքներն ամբողջությամբ, որոնք հնարավորություն կտային համապատասխան որոշում ընդունել ապահովագրական հատուցման հարցի վերջնական կարգավորման վերաբերյալ, և Ապահովագրողի կողմից սահմանված կարգով կամ ժամկետներում չեն կատարվել Կանոնների 8.2 կետում նշված պարտավորությունները:

8.4 Ապահովագրողն իրավունք ունի՝

ա) Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերների և գործակալների միջոցով,

բ) վերաապահովագրել իր ստանձնած ապահովագրական ռիսկը ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,

գ) ուսումնասիրել Ապահովագրության օբյեկտը և անհրաժեշտության դեպքում հարցումներ կատարել համապատասխան իրավասու մարմիններին,

դ) միակողմանի վաղաժամկետ լուծել Ապահովագրության պայմանագիրը Ապահովագրողի կողմից՝ օրենսդրությամբ կամ Ապահովագրության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում:

8.5 Ապահովագրողը պարտավոր է՝

ա) Ապահովագրողին ծանոթացնել Ապահովագրության պայմաններին, Ապահովագրողի պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,

բ) Ապահովագրողի պահանջով և օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Ապահովագրության պայմանագրում, եթե նրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

գ) ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո պարզել նրանց իսկությունը և կատարել ապահովագրական հատուցում կամ մերժել այն,

դ) չհրապարակել Ապահովագրողի բանկային, ապահովագրական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները:

8.6 Ապահովագրողն ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և Ապահովագրության պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

9.1 Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադիրն պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վարկառուի (վնասը պատճառած անձի) նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ վերջինիս կողմից հատուցված գումարի մասով: Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն Ապահովագրողին անցնելը բացառող Ապահովագրության պայմանագրի պայմանն առ ոչինչ է:

9.2 Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադիր (շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

9.3 Ապահովադիրը (շահառուն) պարտավոր է ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

9.4 Եթե Ապահովադիրը (շահառուն) հրաժարվել է ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադիր (շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:

10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1 Վիճելի հարցերի լուծման ժամանակ Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

10.2 Կանոնների և նրա թարգմանությունների տարբերակներիցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

10.3 Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ “Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին” ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ դատարաններում: